SCPEC
THE STATE COMMISSION
FOR THE PROTECTION OF ECONOMIC COMPETITION
OF THE REPUBLIC OF ARMENIA

ՀՈՒՇԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ԵՎ

ՂՐՂԶԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱԿԱՄԵՆԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը (այսուհետ՝ ՀՀ ՏՄՊՊՀ), մի կողմից,

և Ղրղզական Հանրապետության կառավարությանն առընթեր հակամենաշնորհային կարգավորման պետական գործակալությունը (այսուհետ՝ Գործակալություն), մյուս կողմից,

այսուհետ՝ Կողմեր,

ցանկություն հայտնելով խթանել համագործակցությունը մրցակցային քաղաքականության ոլորտում,

նպատակ ունենալով ստեղծել հավասարության և փոխադարձ շահերի սկզբունքների վրա հիմնված բարենպաստ պայմաններ երկկողմ հարաբերությունների զարգացման համար,

հաշվի առնելով մրցակցության դերը շուկայական տնտեսության արդյունավետ զարգացման գործում,

կնքեցին սույն հուշագիրը հետևյալի մասին.

Հոդված 1

Կողմերը կնպաստեն մրցակցության ոլորտում համագործակցության զարգացմանն ու ամրապնդմանը՝ Կողմերի պետությունների ազգային օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 2

Կողմերի միջև համագործակցությունն իրականացվում է Կողմերի համար փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հետևյալ հիմնական ուղղություններով.

ա) օրենսդրության բարելավման նպատակով մրցակցության ոլորտում Կողմերի պետությունների ազգային օրենսդրության մեջ կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվության փոխանակում՝ հաշվի առնելով Կողմերի փորձը,

բ) մրցակցության կանոնների խախտման ուսումնասիրության ոլորտում փորձի փոխանակում,

գ) Կողմերի՝ մրցակցության հարցերը կարգավորող պետական մարմինների միջև փոխգործակցության ոլորտում փորձի փոխանակում,

դ) մրցակցության ոլորտում ուսումնասիրությունների իրականացման և փաստաթղթերի մշակման շրջանակներում փոխգործակցություն,

ե) փոխգործակցություն և փորձի փոխանակում միջազգային համագործակցության ոլորտում, ներառյալ Միջազգային մրցակցային ցանցը (ICN), Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը (OECD) և Առևտրի համաշխարհային կազմակերպությունը (WTO).

Հոդված 3

Սույն Հուշագրի Հոդված 2-ի կատարման նպատակով Կողմերի միջև համագործակցությունն իրականացվում է հետևյալ ձևերով.

ա) մրցակցության ոլորտում օրենսդրության մեջ կատարված փոփոխությունների և դատական գործերի վերաբերյալ տեղեկատվության փոխանակում, որոնք Կողմերի օրենդրության համաձայն չեն հանդիսանում պետական գաղտնիք կամ սահմանափակ տարածում (հասանելիություն) ունեցող տեղեկություններ (առևտրային, բանկային, հարկային կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք, ինչպես նաև այլ գաղտնի տեղեկատվություն),

բ) մասնագետների, այդ թվում՝ դատական գործընթացներում ընդգրկված աշխատակիցների մասնագիտական ուսուցման նպատակով սեմինարների և ուսումնական այցերի կազմակերպում Կողմերից յուրաքանչյուրի պետություններում առկա ռեսուրսների հաշվին,

գ) մասնակցություն Կողմերի կազմակերպած բարեխիղճ մրցակցության վերաբերյալ համաժողովներին, սիմպոզիումներին, սեմինարներին և այլ միջոցառումներին,

դ) փորձագետների խորհրդակցություն կամ էլեկտրոնային փոստով

խորհրդատվություն Կողմերի մասնագետների միջև, որոնք ապահովում են փոխադարձ հետաքրքրության առարկա հանդիսացող կոնկրետ խնդիրների վերաբերյալ տեղեկատվության արագ փոխանակումը,

ե) Կողմերի միջև համագործակցության ուղղություններն ու հեռանկարները քննարկելու նպատակով Կողմերի ղեկավարների այցերի և հանդիպումների կազմակերպում,

զ) մրցակցության կարգավորման ոլորտում Կողմերի պետություններում հրապարակված գիտական գրականության, գիտագործնական ուսումնասիրությունների արդյունքների փոխանակում:

Հոդված 4

Սույն Հուշագրի շրջանակներում համագործակցությանն ուղղված միջոցառումների համակարգումը և տեղեկատվության փոխանակումն իրականացվում է ռուսերեն լեզվով փոստի և/կամ էլեկտրոնային փոստի միջոցով կամ Կողմերի մասնագետների կամ փորձագետների կողմից խորհրդատվությունների միջոցով:

Հոդված 5

Կողմերն իրենք են հոգում սույն Հուշագրի դրույթների կատարման ընթացքում առաջացած ծախսերը՝ իրենց պետությունների օրենսդրությանը համապատասխան, եթե յուրաքանչյուր կոնկրետ դեպքում այլ կարգ համաձայնեցված չէ:

Հոդված 6

Սույն Հուշագրի մեկնաբանումից և կատարումից բխող վեճերը լուծվում են Կողմերի միջև խորհրդատվությունների և բանակցությունների միջոցով:

Հոդված 7

Սույն Հուշագրի դրույթները չեն կարող ազդել այլ միջազգային պայմանագրերից բխող իրավունքների և պարտավորությունների վրա, որի կողմ են հանդիսանում Կողմերի պետությունները:

Հոդված 8

Սույն Հուշագրում փոփոխությունները և լրացումները կատարվում են Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ՝ առանձին

արձանագրություններ կազմելու միջոցով, որոնք հանդիսանում են սույն Հուշագրի անբաժանալի մասը և ուժի մեջ են մտնում սույն Հուշագրի 9-րդ հոդվածով նախատեսված կարգով:

Հոդված 9

Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրելու պահից և գործում է անորոշ ժամանակով:

Սույն Հուշագրի գործողությունը դադարում է Կողմերից որևէ մեկի կողմից՝ այդ մասին գրավոր ծանուցումը ստանալուց 90 օր հետո:

Համագործակցության վերաբերյալ սույն Հուշագիրը չի համարվում միջազգային պայմանագիր և չի սահմանում Կողմերի համար որևէ իրավունքներ և պարտականություններ, որոնք կիրառվում են միջազգային իրավունքում:

Ստորագրված է՝ 2016 թվականի սեպտեմբերի 27-ին, Ռուսաստանի Դաշնության Մոսկվայի տարածաշրջանում երկու օրինակից՝ յուրաքանչյուրը՝ հայերեն, ղրղզերեն, ռուսերեն լեզուներով, որոնք ունեն նույն իրավաբանական ուժը: Սույն Հուշագրի դրույթների մեկնաբանման հետ կապված տարաձայնությունների առաջացման դեպքում նախապատվությունը տրվում է ռուսերեն լեզվով կազմված օրինակին:

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով

Արտակ Շաբոյան
Նախագահ

Ղրղզական Հանրապետության կառավարությանն առընթեր հակամենաշնորհային կարգավորման պետական գործակալություն

Բոլսունբեկ Կազակով
Տնօրեն